ԱՂՈԹԱԳՐՔԵՐ

Գ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՂՈԹԱԳՐՔԵՐ

Գ

ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
ՈՐ ԿՈՉԻ

ԿԻՊՐԻԱՆՈՍ

ՎԱՄՆ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳ ՊԱՏԱՀԱՐԱՅ
ՈՐՔ ԳԱՆ Ի ՎԵՐԱՅ ՄԱՐԴՈՅ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Կ - 508

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական Խորհրդի

ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՈՐ ԿՈՉԻ
Կ - 508 ԿԻՊՐԻԱՆՈՍ վասն ամենայն ազգ պատահարաց որք գան ի վերայ մարդոյ: – Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010.– 112 էջ:

Սույն Աղոթագիրքը 1953 թ. Երուսաղեմում տպագրված «Կիպրիանոս» աղոթագրքի վերահրատարակությունն է:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ

«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-070-7 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ Ուրբաթագիրքը, աղոթքների ժողովածու լինելով, բազմիցս վերահրատարակվել է տարբեր անուններով՝ «Գիրք աղօթից» (Կ. Պոլիս, 1799), «Ակն հոգեկան» (Ս. Էջմիածին, 1683), «Աղօթագիրք» (Կ. Պոլիս, 1798) և այլն: Այս բոլոր աղոթագրքերի բովանդակությունը, չնչին տարբերությամբ, գրեթե նույնն է: Որոշ հայագետներ այդ աղոթագրքերին տվել են նաև «Կիպրիանոս» անունը, և վերջին ժամանակներում դրանք վերահրատարակվել են «Գիրք աղօթից որ կոչի ԿԻՊՐԻԱՆՈՍ վասն ամենայն ազգ պատահարաց, որք գան ի վերայ մարդոյ» կամ «Աղօթագիրք ԿԻՊՐԻԱՆՈՍ, որ կոչի նաև ՀԱԶԱՐ ԵՒ ՄԷԿ ԱՆՈՒՆ» վերնագրերով:

Այս աղոթագրքերի մէջ ընդգրկված են ս. Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը, Հովհաննես Գառնեցու մի քանի աղոթքներ («Առ Սուրբն Աստուածածին», «Վասն ճանապարհի»), ավետարաններից բժշկության մի քանի դրվագ, Անտիոքի եպիսկոպոս ս. Կիպրիանոսի* դարձի պատմությու-

* Սրբերի վկայաբանությունը հիշում է երկու Կիպրիանոս, երկուսն էլ ապրել են Գ. դարում. Կիպրիանոս Կարթագենացի վարդապետը՝ նահատակվել է 255 թ., և Կիպրիանոս Անտիոքացին՝ մոգությունից քրիստոնեության է դարձել

նը, նույն Կիպրիանոսին վերագրված մի քանի պահպանիչ աղոթք (Ուրբաթագրքում՝ «Աղօթք սրբոյն Կիպրիանոսի, զոր ասացեալ է վասն դիւաց եւ վասն կախարդաց, եւ աղանդաւց», «ընդդէմ բնաւին այսոց պղծոց եւ ընդդէմ համայնից պատահարաց չարաց, եւ մանաւանդ ընդդէմ հնարագործութեան դիւականաց»), Ս. Գրիգոր Նարեկացու մատյանի որոշ հատվածներ (Բան ԺԲ., ԻԸ., ԽԱ., ՁԴ., ՁԹ., Ղ., ՂԴ., ՂԵ.), գոհաբանական որոշ աղոթքներ («Աղերս առ Ս. Առաքեալսն», «Գովեստ Ս. Խաչին», «Անուանք սուրբ նշանացն» և այլն): Այս է պատճառը, որ Աղոթագիրքը կոչել են «Կիպրիանոս» անունով (կարևորելով ս. Կիպրիանոսի դարձի պատմությունը և նրա աղոթքները):

«Կիպրիանոսի» ներկա հրատարակությունը 1953 թ. Երուսաղեմում տպագրված աղոթագրքի վերահրատարակությունն է:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

Հրատարակչական բաժին

և նահատակվել 285 թ., Դիոկղետիանոս կայսեր օրոք: Ս. Կիպրիանոս Անտիոքացի եպիսկոպոսի վկայաբանությունը կա Հայոց Հայսմավուրքներում. տե՛ս Համաբարբառ Յայսմաւուրք, Ժ., հոկտեմբեր 2, Ս. Էջմիածին, 2010՝ «Կիպրիանոս եպիսկոպոսի և Յուստիանէ կոյսի վկայաբանութիւնը»:

ԱՂՕԹՔ ՊԻՏԱՆԻՔ

ԻԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ ԱՐԱՐԵԱԼ

Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Հայոց Կաթուիկոսի

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ, Հայր և Որդի և Սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց, ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ և երկիրպա-
գանեմ քեզ, անբաժանելի լոյս, միաս-
նական Սուրբ Երրորդութիւն և մի
Աստուածութիւն, արարիչ լուսոյ և հա-
լածիչ խաւարի, հալածեա՛ ի հոգւոյ իմմէ
զխաւար մեղաց և անգիտութեան, և լու-
սաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ
աղօթել քեզ ի հաճոյս և ընդունել ի քէն
զխնդրուածս իմ. և ողորմեա՛ քո արա-
րածոց և ինձ՝ բազմամեղիս:

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ,
որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի
խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յեր-
կինս և առաջի քո, ընկա՛լ զիս որպէս
զանառակ որդին և զգեցո՛ ինձ զպատ-
մուճանն զառաջին, զոր մերկացայ մե-
ղօք. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝
բազմամեղիս:

Որդի Աստուծոյ Աստուած ճշմարիտ,
որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ և

առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիա-
մայ, վասն մերոյ փրկութեան խաչե-
ցար, թաղեցար և յարեար ի մեռելոց և
համբարձար փառօք առ Հայր, մեղայ
յերկինս և առաջի քո, յիշեա՛ զիս որ-
պէս զաւազակն, յորժամ գաս արքայու-
թեամբդ քով. և ողորմեա՛ քո արարածոց
և ինձ՝ բազմամեղիս:

Հոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ,
որ իջեր ի Յորդանան և ի Վերնատունն և
լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ
աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո,
մաքրեա՛ զիս աստուածային հրով քով՝
որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառա-
քեալսն. և ողորմեա՛ քո արարածոց և
ինձ՝ բազմամեղիս:

Ամենեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք
իմովք, հոգւով և մարմնով իմով, մի՛ յի-
շեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ
քում սրբոյ. և ողորմեա՛ քո արարածոց
և ինձ՝ բազմամեղիս:

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով, ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց և գրեա՛ զանուն իմ ի դպրութեան կենաց. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քոյ զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Ամենախնամ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայիլ յայրատ, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց՝

ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քոյ, զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քոյ ի սրտի իմում. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից և ի գործոց փրկեա՛ զիս. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Կամեցող բարեաց Տէր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Արքա՛յ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զակմս քո. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Խնամող արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց և ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ և ի գիշերի, ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել, զի մի՛ երբէք սասանեցայց. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Աստուած իմ, որ բանաս զձեռս քո և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Դարձուցիչ մոլորելոց, դարձո՛ զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն և բևեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենոյն, և զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց և գործեցից զարդարութիւն. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Աղբիւր անմահութեան, աղբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Պարգևիչ ողորմութեան, պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քոյ հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութեամբաւանդել զհոգի իմ և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն, որք են ի ներքոյ երկնից. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթեւանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեան քոյ. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մատներ ի դատաստան ընդ ծառայի քում, այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն և լսելի արա՛ ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Ամենողորմ Տէր, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն, որ առ իս յանցանացն, և դարձո՛ զնոսա ի չարեացն, զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ քում արժանի եղիցին. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

Փառաւորեալ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս քոյ և կատարեա՛ ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին և Յովհաննու Մկրտչին, և Ստեփանոսի Նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, միանձանց և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց: Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԱՂՕԹՔ
ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

Անսկիզբն Աստուած, անեղ Աստուած, անիմանալի Աստուած, անպարագրելի Աստուած, անծին Աստուած, ամէնարքայ Աստուած, ամէնարարիչ Աստուած, ամէնարփի Աստուած, ամենագէտ Աստուած, ամէնարագ Աստուած, ամենաղատ Աստուած, ամենամեծ Աստուած, ամէնաղբիւր Աստուած, ամէնարմատ Աստուած, ամէնարճակ Աստուած, ամենաայց Աստուած, ամենաայցելու Աստուած, ամէնազգու Աստուած, ամէնազգիչ Աստուած, ամէնասաց Աստուած, ամէնարթուն Աստուած, ամենաբաւ Աստուած, ամենաբարձրեալ Աստուած, ամենաբերկրեալ Աստուած, ամենաբաւական Աստուած, ամենաբարի Աստուած, ամենաբոյժ Աստուած, ամենաբուժիչ Աստուած, ամենաբուղխ Աստուած, ամենաբաշխ Աստուած, ամենաբաշխող Աստուած, ամենագով Աստուած, ամենագովելի Աստուած, ամենագովեալ Աստուած, ամենագութ Աստուած, ամենագթած Աստուած, ամենագտիչ Աստուած, ամենագանձ Աստուած, ամենագորով Աստուած, ամենայար Աստուած, ամենաղատաւոր Աստուած, ամենաղաւանեալ Աստուած, ամենադիր Աստուած, ամենադարման Աստուած, ամենադարմանիչ Աստուած, ամենաեզերիչ Աստուած, ամենաերբ Աստուած, ամենազօր Աստուած, ամենազօրեղ Աստուած, ամենազարդ Աստուած, ամենազարդարող Աստուած, ամենազարդարիչ Աստուած, ամենագեղ Աստուած, ամենափրկիչ Աստուած, ամենաէն Աստուած, ամենաէակ Աստուած, ամենաերկինք Աստուած, ամենասուրբ Աստուած, ամէնողորմ Աստուած, ամենամեծ Աստուած, ամենամաքուր Աստուած, ամենաընտրող Աստուած, ամենաընդունակ Աստուած, ամենաընդունող Աստուած, ամենաընդունմն Աստուած, ամենաթագ Աստուած, ամենաթագաւոր Աստուած, ամենաժառանգ Աս-

տուած, ամենիշխան Աստուած, ամէնիշխող Աստուած, ամէնիմաստ Աստուած, ամենաիրաւ Աստուած, ամենալոյս Աստուած, ամենալիր Աստուած, ամենալրումն Աստուած, ամենախնամ Աստուած, ամենախնամող Աստուած, ամենախօս Աստուած, ամենախրատ Աստուած, ամենախորին Աստուած, ամենախորհուրդ Աստուած, ամենածագումն Աստուած, ամենածաւալ Աստուած, ամենակալ Աստուած, ամենակիր Աստուած, ամենակրող Աստուած, ամենակայծ Աստուած, ամենակատար Աստուած, ամենակոչ Աստուած, ամենակէտ Աստուած, ամենահաս Աստուած, ամենահասու Աստուած, ամենահաստատ Աստուած, ամենահաստատիչ Աստուած, ամենաձիր Աստուած, ամենաձեռն Աստուած, ամենաձեռնտու Աստուած, ամենաղեկավար Աստուած, ամենաղամբար Աստուած, ամենաճարակ Աստուած, ամենաճառագայթ Աստուած, ամենաճշմարիտ Աստուած, ամենամաքրիչ Աստուած, ամենամարդ Աստուած, ամենամարդիչ Աստուած, ամենայարոյց Աստուած, ամենայառաջ Աստուած, ամենուրեք Աստուած, ամենայորդոր Աստուած, ամենայորդորիչ Աստուած, ամենայոյս Աստուած, ամենաշարժ Աստուած, ամենաշունչ Աստուած, ամենաշահ Աստուած, ամենաշահաւոր Աստուած, ամենաշէն Աստուած, ամենաուղղորդ Աստուած, ամենաուղիղ Աստուած, ամենաուժեղ Աստուած, ամէնուռոգ Աստուած, ամենաչափող Աստուած, ամենապատիւ Աստուած, ամենապարգև Աստուած, ամենասաստիչ Աստուած, ամենապարզ Աստուած, ամենապարզիչ Աստուած, ամենապահ Աստուած, ամենապահող Աստուած, ամենապարագրող Աստուած, ամենապայծառ Աստուած, ամենապարոյր Աստուած, ամենաջահ Աստուած, ամենաջան Աստուած, ամենաջամբ Աստուած, ամէնառատ Աստուած, ամէնառատացուցիչ Աստուած, ամենասրբիչ Աստուած, ամենասահման Աստուած, ամենասահմանիչ Աստուած, ամենասանձ Աստուած, ամենասանձող

Աստուած, ամենասփիւռ Աստուած, ամենասուն Աստուած, ամենավարժիչ Աստուած, ամենավարիչ Աստուած, ամենամաքրիչ Աստուած, ամենավայելուչ Աստուած, ամենատէր Աստուած, ամենատիրող Աստուած, ամենատեղ Աստուած, ամենատու Աստուած, ամենատօն Աստուած, ամենատես Աստուած, ամենատեսուչ Աստուած, ամենապատիւ Աստուած, ամենաբուն Աստուած, ամէնաբարիչ Աստուած, ամենացօղ Աստուած, ամենացայտ Աստուած, ամենացայտող Աստուած, ամենացայգ Աստուած, ամենացնծութիւն Աստուած, ամենացանկ Աստուած, ամենացանկալի Աստուած, ամենափառք Աստուած, ամենափայլ Աստուած, ամենափայլող Աստուած, ամենափայլեալ Աստուած, ամենափայլիչ Աստուած, ամենափոյթ Աստուած, ամենափրկող Աստուած, ամենափրկիչ Աստուած, ամենաքաւ Աստուած, ամենաքաւիչ Աստուած, ամենաքարող Աստուած, ամենաքարոզիչ

Աստուած, անճառ Աստուած, անճառարքայ Աստուած, անճառ արքայութիւն Աստուած, անճառազատութիւն Աստուած, անճառաղբիւր Աստուած, անճառարարիչ Աստուած, անճառապենիազ Աստուած, անճառարփի Աստուած, անճառահաւոր Աստուած, անճառախոր Աստուած, անճառաբարի Աստուած, անճառաբաց Աստուած, անճառաբուղխ Աստուած, անճառագութ Աստուած, անճառազօր Աստուած, անճառիմաստ Աստուած, անճառալուր Աստուած, անճառածագ Աստուած, անճառագով Աստուած, անճառողորմ Աստուած, անճառաչափ Աստուած, անճառաչափ Աստուած, անճառապատիւ Աստուած, անճառավեհ Աստուած, անճառափառ Աստուած, անճառափայլ Աստուած, անախտ Աստուած, անեզր Աստուած, անեղծ Աստուած, անըմբռնելի Աստուած, անժամանակ Աստուած, անլռելի Աստուած, անխարդախ Աստուած, անծայր*

* **Անճառապենիազ՝** անճառ և ապենիազ (=անկարոտ, անպակաս, աննվազ) բառերից կազմված *(ծնթ. հրատ.)*:

Աստուած, անետղ* Աստուած, անհասանելի Աստուած, անղօղելի Աստուած, անմեկնելի Աստուած, անյիշաչար Աստուած, աննինջ Աստուած, անշարժ Աստուած, անոխակալ Աստուած, անպատմելի Աստուած, անկոխելի Աստուած, աննեղելի Աստուած, անօրինակ Աստուած:

Բարի Աստուած, բարեմիտ Աստուած, բարի բնութիւն Աստուած, բարեաց բարի Աստուած, բարեգութ Աստուած, բարեբաշխ Աստուած, բարեբարոյ Աստուած, բարեխորուրդ Աստուած, բարեաց պարգևող Աստուած, բարեսէր Աստուած:

Գովեալ Աստուած, գերիվերոյ Աստուած, գերազարդ Աստուած, գոհաբանեալ Աստուած, գերապանծ Աստուած, գեղեցիկ Աստուած, գերագոյն Աստուած, գոյացուցիչ Աստուած:

* **Անետղ**՝ ան+ետեղ (=տեղ), այսինքն՝ անսահմանափակ, անբովանդակելի *(ծնթ. հրատ.)*:

Դատաւոր Աստուած, դատաւորաց դէտ Աստուած, դիտապետ Աստուած, դասաւորիչ Աստուած, դաւանեալ Աստուած, դասուց վերնոց Աստուած, դեղ կենաց Աստուած, դաստիարակող Աստուած, դրախտ Աստուած:

Երրորդութիւն Աստուած, երկինք Աստուած, երկնաւորաց Աստուած, երկրաւորաց Աստուած:

Զօրաւոր Աստուած, զօրութիւն Աստուած, զօրեղ Աստուած, զուարթնոց Աստուած, զարդարող Աստուած, զարմանք Աստուած, զարմանալի Աստուած, զարհուրելի Աստուած, զարդագին Աստուած:

Էրբեակ և մի Աստուած, էրանեալ Աստուած, էական Աստուած, էացուցիչ Աստուած, էութիւն Աստուած:

Թագաւորաց Աստուած, թագեալ Աստուած, թողիչ մեղաց Աստուած, թողելոց յարութիւն Աստուած, թշնամեաց սատակիչ Աստուած:

Ժառանգութիւն Աստուած, ժամանակեալ Աստուած, ժամանող Աստուած, ժամանակաց Աստուած:

Ի սկզբանէ Աստուած, ինքնակամ Աստուած, ինքնագոյ Աստուած, ինքնակալ Աստուած, ինքնատար Աստուած, ինքնակարող Աստուած, ինքնիշխան Աստուած, իշխող Աստուած, ի բարձունս Աստուած, իմանալի Աստուած:

Լոյս Աստուած, լոյս անստուէր Աստուած, լոյս թափանցիկ Աստուած, լուսազգեստ Աստուած, լուսաւորիչ Աստուած, լուսազարդ Աստուած, լուսատու Աստուած, լուսաճեմ Աստուած, լսող Աստուած, լիութիւն Աստուած, լցուցիչ Աստուած:

Խոր անքնին Աստուած, խաղաղութիւն Աստուած, խնամող Աստուած, խնամիչ Աստուած, խրատիչ Աստուած, խանդաղատող Աստուած, խորհուրդ Աստուած, խորհրդապետ Աստուած, խնդրուած Աստուած, խորհրդագէտ Աստուած, խնդրող Աստուած, խոնարհ Աստուած:

Ծագումն Աստուած, ծնող Աստուած, ծագող Աստուած, ծարաւելոց Աստուած, ծանուցեալ Աստուած, ծանուցիչ Աստուած, ծառայից տէր Աստուած, ծածկատես Աստուած, ծակագէտ Աստուած, ծայր Աստուած:

Կենդանի Աստուած, կենդանարար Աստուած, կենդանատու Աստուած,

կենդանացուցիչ Աստուած, կերակրող Աստուած, կամարար Աստուած, կեանք Աստուած, կամեցող բարեաց Աստուած, կատարեալ Աստուած, կառավարող Աստուած, կուրաց լուսատու Աստուած:

Հայր Աստուած, Հօր Որդի Աստուած, Հոգի Սուրբ Աստուած, հաւատ Աստուած, համերց լեզուատու Աստուած, հոգ-ւոց ազատիչ Աստուած, հրածորան Աստուած, հրաւիրող Աստուած, հինա-ւուրց Աստուած, հարուստ Աստուած, հանուրց Աստուած, հաւատարիմ Աստուած:

Ձայն Աստուած, ձայնող Աստուած, ձեռնտու Աստուած, ձայնից լսող Աս-տուած, ձիր Աստուած, ձիրաբաշխ Աս-տուած:

Ղեկավար Աստուած, ղեկապետ Աս-տուած, ղամպար Աստուած:

Ճշմարիտ Աստուած, ճշմարտութիւն Աստուած, ճշմարտասէր Աստուած, ճարտարապետ Աստուած, ճառագայթ Աստուած, ճառագայթեալ Աստուած, ճոխ Աստուած, ճաշակն Աստուած, ճար Աստուած, ճանապարհ կենաց Աստուած, ճանապարհ բարեաց Աստուած, ճառ Աստուած, ճոռոմ Աստուած:

Մեծարեալ Աստուած, մեծապատիւ Աստուած, մաքրիչ Աստուած, մաքրու-թիւն Աստուած, մաքրող Աստուած, մա-հու լուսատու Աստուած, մեղաւորաց դարձ Աստուած:

Յայտնութիւն Աստուած, յաւիտեան Աստուած, յաւիտենից Աստուած, յարու-թիւն Աստուած, յուսացելոց Աստուած, յուսադրող Աստուած, յարուցիչ Աստուած, յառաջ Աստուած:

Նեղելոց յոյս Աստուած, նորահրաշ Աստուած, նաւապետ բարի Աստուած:

Շնորհ Աստուած, շնորհատու Աստուած, շուրջ Աստուած, շուրջանակի Աստուած, շնորհող Աստուած, շնորհաբեր Աստուած, շաւիղ Աստուած:

Ողորմած Աստուած, ողորմութիւն Աստուած, ուղիղ Աստու

Բաբուն Աստուած, բաբունապետ Աստուած, բախարար Աստուած:

Ցնծութիւն Աստուած, ցանկալի Աստուած, ցաւոց բժիշկ Աստուած, ցօղահոս Աստուած:

Փառք Աստուած, փառաւորեալ Աստուած, փառահեղ Աստուած, փառաբանեալ Աստուած, փրկիչ Աստուած, փրկող Աստուած, փարթամ Աստուած, փարատիչ ցաւոց Աստուած, փառազօր Աստուած, փառք ի բարձունս Աստուած:

Քահանայապետ Աստուած, քերովբէանիստ Աստուած, քաւիչ Աստուած, քաւութիւն Աստուած, քաւարան Աստուած, քարոզիչ Աստուած, քննող Աստուած:

Օրէնք Աստուած, օրինադիր Աստուած, օրհնիչ Աստուած, օրհնեալ Աստուած, օրհնաբանեալ Աստուած:

Քո սուրբ և ահեղ անուանդդ զօրութեամբ, Տէր Աստուած ամենակալ, եղիցիս պահապան ծառայիս:

Ահա զառն Աստուծոյ՝
որ բառնայ զմեղս աշխարհի:

ԱՂՕԹՔ

Վասն կապանաց դիւաց և կախարդաց, աղանդաւորաց և վասն դատաստանի յաջողելոյ

Թագաւոր հզօր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց, որ վասն մեր խոնարհեցար ի հայրական ծոցոյ և առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, մատնեցար, ըմբռնեցար, չարչարեցար, խաչեցար և թաղեցար և յարեար ի մեռելոց, և համբարձար փառօք առ Հայր. զարթո՛ զզօրութիւն քո և ե՛կ ի կեցուցանել զգինս արեան քո, Տէ՛ր, և մի՛ տար գերել սատանայի զքո փրկեալս, և մի՛ տար բնակութիւն չարին՝ զտաճար անուանդ քոյ սրբոյ. և մի՛ զլքեալս քեզ մարմին և անդամ թողուլ ի կոխումն և ի կատականս չարին, այլ գթա՛ ի քո արարածս արարչական սիրով.

Տէ՛ր, ողորմեա՛ մեզ, զի ի խաչ քո պարծելով պարծեցաք, և պահելով պահեսցէ զմեզ յերևելի և աներևոյթ թշնամւոյն. և լիցի պահապան ծառայիս Աստուծոյ. ամէն:

Զար իշխանքն հալածին,
Որք ընդ ծառայս քո մարտնչին,
Երևելով նշան խաչին,
Աներևոյթք կործանեսցին:

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՍ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին և ասէին. Ողորմեա՛ց մեզ, Որդի Դաւթի: Եւ իբրև եկն ի տուն, մատեան առ նա կոյրքն, և ասէ ցնոսա Յիսուս. Հաւատա՞յք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ «Այո, Տէր»: Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա և ասէ. «Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ»: Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա Յիսուս և ասէ. «Զգոյշ կացէ՛ք, մի՛ ոք գիտասցէ»: Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն: Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար: Եւ յելանելն դիւին՝ խօսեցաւ համրն, և զարմացան

ժողովուրդքն և ասեն թէ և ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի: Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս:

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՍ ՈՐ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն գալիլիացւոց: Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն, եկն ի տուն Սիմոնի և Անդրեայ, Յակոբու և Յովհաննու հանդերձ: Եւ զոքանչ Սիմոնի դնէր ջերմացեալ, վաղվաղակի ասեն ցնա վասն նորա: Եւ մատուցեալ յարոյց զնա, կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն և պաշտէր զնոսա: Եւ իբրև երեկոյ եղև ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. և էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն: Եւ բժշկեաց բազում հիւանդս

ի պէս պէս ախտից և դևս բազում եհան, և ոչ տայր խօսիլ դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է:

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՍ ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել ի լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ: Եւ իբրև այդ եղև, կոչեաց զաշակերտսն իւր և ընտրեաց ի նոցանէ երկոտասանս, զորս և առաքեալս անուանեաց: Զ Սիմոն, զոր և Պետրոս անուանեաց, և զ Անդրէաս զեղբայր նորին և զ Յակոբոս և զ Յովհաննէս, և զ Փիլիպպոս և զ Բարդուղիմէոս: Եւ Մատթէոս և զ Թովմաս, և զ Յակոբոս Ալփեայ. և զ Սիմոն զկոչեցեալն Նախանձայոյզ և զ Յուդայ Յակովբայ, և զ Յուդայ Իսկարիովտացի, որ եղև իսկ մատնիչ: Եւ իջեալ նոքօք հանդերձ ի տեղի

մի տափարակ, և ժողով աշակերտացն նորա և բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամենայն Հրէաստանէ և յԵրուսաղեմէ, և յայնմ կողմանէ, և ի ծովեզերէն Տիւրոսի և Սիւդովնի, որք եկին լսել ի նմանէ, և բժշկիլ ի հիւանդութենէ իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին: Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ի նա, զի զօրութիւն բազում ելանէր ի նմանէ և բժշկէր զամենեսին:

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՍ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յետ այսորիկ տօն էր Հրէից, և ել Յիսուս յԵրուսաղէմ: Եւ էր յԵրուսաղէմ ի Պրոպատիկէ աւազանին, որ կոչէր եբրայեցերէն Բեղհեզդա, հինգ սրահ: Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որք ակն ունէին ջրոցն յուզելոյ: Եւ հրեշտակ Տեառն իջանէր ըստ ժամանակի յաւազանն և յուզէր զջուրսն, և որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան: Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն և ութ ամ էր ի հիւանդութեան իւրում:

Զնա իբրև ետես Յիսուս զի անկեալ դնէր, և գիտաց զի բազում ժամանակք են այնուհետև, ասէ ցնոսա. Կամի՞ս ողջ լինիլ: Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին, արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա Յիսուս. «Արի՛, ա՛ռ զմահիճս քո և գնա»՛: Եւ ողջացաւ այրն և յարեաւ, էառ զմահիճս իւր և շրջէր. և էր շաբաթ յաւուրն այնմիկ:



Հա՛յր, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն:

ԴԱՐՁ
ԿԻՊՐԻԱՆՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ես Կիպրիանոս ծառայ Աստուծոյ, յԱնտիոք քաղաքէ, ազգաւ Հելլենացի, առն հեթանոսի որդի. անուն հօր իմոյ Եղեսիա, և մօր իմոյ, Կղոդիա ծնողք իմ նուիրեցին զիս յուսումն դից՝ լինել պաշտօնեայ կռոց, և ետուն զիս յուսումն գիտութեան, և զամենայն ուսայ զկախարդական գիրս առաւել քան զՍիմոն և զՆաքովր, և եղէ հասու ամենայն հնարագիտութեանց. բազում անգամ ելանէի յօդս և կախարդութեամբ գնայի ի վերայ ծովու. և էին ի հրամանս իմ ամենայն գունդք դիւաց. և զոր ինչ խորհէի՝ առ ժամայն կատարէր: Ելանէի յապարանսն և առնէի զչաւիղն արեգականն և զլուսնին յերեսս իմ, և յերեսք իմ

փայլէին իբրև զարեգակն, ես կատարէի զկամս դիւաց մեծաւ ուրախութեամբ, և էի մոլորեալ ի գործ չարութեան և ոչ ճանաչէի զԱստուած, և զամենեսեան գայթակղեցուցանէի յաղագս չար արուեստին իմոյ, զոմանս աչացաւ առնէի, զոմանս գլխացաւ, զոմանս քամոտ, զոմանս ջերմնոտ, զոմանս հիւանդ, զոմանս յազգաց վարէի, զոմանց զգոյն յերեսաց շրջէի, զոմանց միտս մոլորացուցանէի, զոմանս ատելիս առնէի իւրեանց ազգին, զայր ի զկին արկանէի ընդ միմեանս, և տայի նոցա ատել զմիմեանս, և զայլ բազում չարիս դիւականս առնէի ի վերայ երկրի: Եւ այնչափ հմուտ եղէ դիւացն, զի ոչ մնաց գործ և ոչ խորհուրդ, զոր ոչ գիտացի, գիտացի և բազմութիւն դիւաց, զի որպէս ջուր որ ելանէ յաղբերաց՝ այնպէս ելանեն դևք և պատրեն և խաբեն զորդիս մարդկան, զոր Տէր Աստուած հեռացուսցէ ի ծառայէս Աստուծոյ:

Եւ կապէի կախարդութեամբ իմով զերկինս, որ ոչ տայր զանձրև. զերկիր, որ ոչ բուսուցանէր զսերմանիս իւր. զարեգակն և զլուսին և զաստեղս հաստատութեան. զծառս, որ ոչ տային զպտուղս. զծովս, որ ոչ տայր զալիս իւր. զձկունս, որ ոչ լողային զծովս. զգետս, որ ոչ գնային. զաղբիւրս, որ ոչ բղխէին. զթռչունս, որ ոչ վերանային յօդս. զանասունս, որ ոչ յղանային, զյղիս, որ ոչ ծնանէին. զկանայս, որ ոչ յղանային. զզեռունս, որ ոչ զեռային. զվաստակաւորս, որ ոչ վաստակէին. զվաճառականս, որ ոչ վաճառէին. զօդն, որ ոչ թնդայր. և կապէի զերկինս օդաքն և զերկիր ամենայն զեռնօք, որ ոչ անցանէին ըստ հրամանս իմ. հազար հարիւր եօթանասուն երկու աղանդք կանանց և կախարդաց, և արանց աղանդաւորաց: Արձակ երիտասարդ մի, որոյ էր անուն Ագղաւդիոս, ցանկացաւ գեղեցիկ կուսի միում, որոյ անունն էր Յուստիանէ,

առնուլ զնա ի կնութիւն և ոչ կարէր, և առաքեաց բազում պատուական ինչս, ոսկի և արծաթ և գեղեցիկ հանդերձս, և կոյսն ոչ հաւանեցաւ և դարձոյց անարգանօք. և առեալ երիտասարդն զամենայն ինչս գնաց առ Կիպրիանոս, և նա ասէ. «Ես դարձուցանեմ զնա ի կամս քո»: Եւ առաքեաց զմի ի դիւացն առ Յուստիանէ, և նա սուրբ աղօթիւքն հալածեաց զնա. և ապա առաքեաց զդևն պոռնկութեան, և եղեալ դիւրին ի կերպարանս կնոջ պառաւի, և գնացեալ ի դուռն սուրբ կուսին ի գիշերի և ասէ. «Ո՛վ դուստր իմ, զայս գիշեր ընդ քեզ կացից յաղօթս, և մտեալ դևն առ կոյսն և կային յաղօթս զողջոյն գիշերն միաբան». և ապա ասէ սատանայ. «Ո՛վ դուստր, ի կուսութենէ ո՞վ իցէ վարձս ընկալեալ: Եւ եթէ չէր ամուսնացեալ, ուստի՞ էին նախահարք, մարգարէք, առաքեալք, հայրապետք. ե՛կ երթիցուք առ մեծն Կիպրիանոս և ամուսնացիր»,

Եւ ապա իմացեալ կուսին եթէ դիւական էր բանն, եհան զնշան խաչին ի վերայ մարմնոյ իւրոյ. և կնքեաց զանձն, և դևն հալածեցաւ և աներևոյթ եղև ահիւ և դողութեամբ, և գնաց առ Կիպրիանոս: Եւ Կիպրիանոս ասէ ցդևն. «Զի՞նչ իցէ զի երկիւղիւ դողաս և սասանիս». Ասէ դևն. «Տեսի զնշան Խաչին և երկիւղիւ դողամ և սասանիմ»: Ասէ Կիպրիանոս. «Զի՞նչ իցէ նշան Խաչին, որ զարհուրեցուցանէ զքեզ»: Ասէ դևն ցԿիպրիանոս. «Երդուիր, զի ոչ ուրանաս մեզ, և ես ասեմ քեզ զամենայն խորհուրդս մեր և զնշան Խաչին»: Եւ երդուաւ Կիպրիանոս ի սուտ և ի սնոտի պաշտամունս նոցա՝ եթէ ոչ ուրանամ զձեզ: Եւ սկսաւ դևն պատմել մի ըստ միոջէ զամենայն և ասէ. «Աստուած զմարդ արար ի հողոյ, զԱդամ, և ասէ. ‘‘Եկայք հրեշտակք և հրեշտակապետք, երկի՛ր պագէք ձեռակերտին իմում Ադամայ’’. Այլ դասք դիւաց հպարտացան և ոչ խոնարհե-

ցան երկիրպագանել Ադամայ: Բարկացաւ Աստուածութիւնն և զերկինս պատառեաց և դիւաց գունդս ի վայր ելից, զանթիւ զօրս մեր. և չինեցաք ապարանս և դժոխք անուանեցաք, և զհոգիս արդարոց և մեղաւորաց մինչև ցՅովհաննէս Մկրտիչ, զամենայն ըմբռնեցաք և ի դժոխս ածաք: Յետոյ առաքեաց Աստուած զՈրդին իւր Միածին, որ եկն և ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ Աստուածածնէն. զմեռեալս յարոյց, զբորոտս սրբեաց, զկաղս գնացոյց, զկոյրս լուսաւորեաց և զայլ բազում սքանչելիս արար. մատնեցաւ ի Յուդայէ և խաչեցաւ ի հրէից և թաղեցաւ և յարեաւ ի մեռելոց և Խաչիւն իւրով լուսաւորէ զամենայն արարածս: Հաւատացեալքն ուրախ լինին և ուրացողք կոծեսցին»:*

* Դևի ներկայացրած թյուր տեսակետն է *(ծնթ. հրապ.)*:

Այս է նշան Խաչին, զոր տեսանեմք և զարհուրիմք և սոսկամք: Եւ ապա Կիպրիանոս ի միտս իւր եկեալ ասէ. «Եթէ նշան Խաչին այդչափ զօրութիւն ունիցի, ապա Խաչեալն որչա՞փ ևս առաւել»:

Ես հաւատամ ի Քրիստոս, և ի զօրութիւն Խաչին, և յԱստուած Հայր ամենակալ, զի նա միայն է ճշմարիտ Աստուած, և կուռքն դևք են և սատանայ: Եւ ապա այրեաց զամենայն գիրս կախարդութեան իւրոյ, գնաց առ եպիսկոպոսն քաղաքին, և մկրտեցաւ և ձեռնադրեցաւ քահանայ, և զկնի աւուրց՝ եպիսկոպոս, և զաղօթս արար և ասէ. «Տէր Աստուած իմ, սիրեցի զքեզ և ծանեայ ի ձեռն սուրբ հայրապետին Մատթէոսի և Յուստիանեայ

կուսին զզօրութիւն Խաչի քոյ. ողորմած Աստուած, ողորմեա՛ց ինձ որպէս աւազակին, քաւեա՛ զիս որպէ՛ս զԶաքէոսն, արդարացո՛ զիս որպէ՛ս զմաքսաւորն, հա՛ն զիս ի գբոյ մեղաց՝ որպէս Երեմիա և զԴանիէլ ի գբոյ բանտէն, չիջո՛ յինէն զբռնութիւն թշնամւոյն՝ որպէս զհուր երից մանկանց ի Բաբելովնի հողմաբեր ցողովն օրհնութեան»:

Եւ զոր յառաջն կապէի չար և դիւական աղանդօք, այժմ արձակեալ եմ զամենայն կապեալսն հրամանաւն Աստուծոյ. կացցեն երկինք և երկիր ի հաստատութեան իւրեանց, հող զբոյս դալար բուսուսցէ, ծառք զպտուղս իւրեանց տացեն, և ամենայն կապեալքն արձակումն առցեն յանուն ամենասուրբ Երրորդութեանն Աստուծոյ:

Երդմնեցուցանեմ զքեզ, սատանայ, անուամբն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, և ի հազար և մի անունն Աստուծոյ, որ զԱդամն և զԵւայ բարկացոյց, և զինն դասս հրեշտակաց, որ ելանեն և իջանեն յԱդրիոպոլիս քաղաք, և յանուն սերովբէից, որ կան ի սպասաւորութիւն Որդւոյն Աստուծոյ, և սքողելով ծածկեն զերեսս իւրեանց և երգեն՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո:

Երդմնեցուցանեմ զձեզ, դևք չարք և որդիք սատանայի, որ էք օգնական ամենայն կախարդաց և չարագործաց. երդմնեցուցանեմ զձեզ դևք ի գեղեցկութիւն Ադամայ, ի վայելչութիւն դրախտին, ի խոնարհութիւն ամենայն սրբոց, և ի սէր ամենայն մարտիրոսաց, ի պատարագն Աբելի ի կոչել զանուն տեառն Ենովսայ, յարդարութիւն Նոյի, ի քահանայութիւն Մելքիսեդեկի, ի հաւատս և ի հիւրընկալութիւն Աբրահամու, ի կապանսն Իսահակայ, ի պատրանս Յակովբայ, ի գեղեցկութիւն Յովսեփայ, ի համբարձումն Եղիայի, ի հնազանդութիւն Եղիսէի, ի տախատակն Մովսիսի, ի պատմուճանն

Ահարովնի, որ զարդարեալն էր երկոտասան ակամբք, որ օրինակ էին երկոտասան առաքելոցն Քրիստոսի. ի քնարն և ի Սաղմոսն Դաւթի, ի մատանին Սողոմոնի, ի գաւազանն Մովսիսի, և յաղօթսն Ահարովնի, յաւետիսն Գաբրիէլի, զոր ետ սուրբ կուսին Մարիամու. ի ծնունդն և ի մկրտութիւն Յիսուսի Քրիստոսի, որ մկրտեցաւ ի Յորդանան ի Յովհաննէ, և ի սուրբ հրամանսն, որ հրամայեցին անդամալուծին, թէ՝ Արի՛, ա՛ռ զմահիճս քո, և ի թուքն, որ եբաց զաչս կուրին, և ի գալուստն յաւանակաւ յԵրուսաղէմ, ի յարութիւնն Ղազարու, ի մատնումն և ի խաչելութիւն Քրիստոսի, ի գեղարդն և ի բևեռն Քրիստոսի, ի փշեղէն պսակն և ի հեղումն արեան Որդւոյն Աստուծոյ, որ հեղաւ ի վերայ սրբոյ Խաչին:

Երդմնեցուցանեմ և կապեմ և հալածեմ զձեզ, դևք չարք, յարութեամբն Քրիստոսի, և ի գալուստն Հոգւոյն Սրբոյ, և այլակերպութեամբն Քրիստոսի, որ այլակերպեցաւ ի Թափոր լերին. ոչ ունիք իշխանութիւն դևք և աղանդք և կախարդութիւնք արանց և կանանց մերձեցեալ ի ծառայս Աստուծոյ:

Երդմնեցուցանեմ զձեզ ի բանն անսպառ, ի լոյսն անճառ, ի թագն անպատում, որ հրեշտակացն զարհուրելի, ի թագաւորն սոսկալի, ի մատանին Սողոմովնի, ի կապանսն պղնձիս, ի տախտակն Մովսիսի՝ գրեալ մատամբն Աստուծոյ, յաղօթսն Ահարովնի, ի պատմուճանն ցանկալի, ի սուրբն Սինա, ի քառասնօրեայ պահս Մովսիսի՝ ի սուրբ արիւն մանկանցն Բեթղեհէմի, յարդարութիւն Նոյի, ի հաւատս Ղովտայ, ի կարգն Մելքիսեդեկի, յաւետիսն Գաբրիէլի, յաթոռն չորեքկուսի, որոյ մի կողմն մարդոյ էր նման իմաստնոյ և բանաւորի, մին ի կերպարանս էր առիւծու, որոյ տեսիլն հուր կիզելի, մին ահեղ և սքանչելի և զտեսիլ հրեղէն եզին ունէր, միւսն ունէր զթև արծւոյ ահաւոր

տեսլեամբ քան զամենայն և զարմանալի, որոյ վերայ նստեալ բազմէր Տէրն և Աստուած ամենայնի. ուր այս անուանք սուրբք յիշեսցին, գիրք և հրամանք պատահին, չարն ի բաց միշտ հալածի, կապանք և յուռութք լուծանին ի ծառայից Աստուծոյ. ամէն:

Յոյց մեզ, Տէր, զողորմութիւնս քոյ և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ:

Որպէս զի մեծ են գործք քո, Տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո:

ԱՂՕԹՔ

Երանելւոյն Յովհաննու Գառնեցւոյ ասացեալ առ սուրբ Աստուածածինն

Աստուածածին մայր Քրիստոսի և ծնող միածնի Հօր, բարձող անիծից և պարծանք ազգի մարդկան: Յերկնային զօրացն երանեալ և ի հողեղինացս օրհնաբանեալ, միջնորդ Աստուծոյ և մարդկան, հաշտարար ընդ արարածս, թագ և պսակ կուսից և համարձակ բարեխօս վասն ազգի մեղաւորաց: Մեղուցեալս ամենայնի անկանիմ առաջի քո և աղաչեմ զքեզ իբրև զնոյն ինքն զմարմնացեալն ի քէն, բարեխօսեա՛ վասն իմ առ Բանն Աստուած, զոր ծնար մարմնով, զոր կերակրեցեր զկերակրիչն ամենայն կենդանեաց:

Աղաչեա՛ վասն մեր զանդրանիկդ քո: Կացո՛ կանգուն առաջի նորա ցուցմամբ սուրբ ստեանցդ: Կացո՛ առաջի նորա միջնորդ և բարեխօս զմանկութիւն իւր՝ կաթամբ սնանիլն որպէս մանուկ, զուսովդ բառնիլն, զգրկօք գգուիլն, շրթամբք համբուրիլն, զողջագուրիլն որպէս տղայ, զերթ և զեկն քո ընդ նմա, յԵգիպտոս և ի Նազարէթ և յամենայն տեղիս, զտրտմութեամբ տագնապիլն քո վասն նորա ի ժամ չարչարանացն, զյանձնարարութիւն քո առ Յովհաննէս, յորժամ հեղուսեալ կայր վշտօք ի վերայ Խաչին, զդառն արտասուսն քո, զոր վտակօրէն հեղուիր, յորժամ տեսանէիր զնա վտանգեալ ի վերայ խաչին, վասն որոյ մատնատատան տառապէիր կսկծակոծ վասն չարչարանացն, վասն սաստիկ ծարաւմանն, վասն ճաշակման լեղւոյն՝ քացախին, վասն տեսանելւոյն զքրտնատեսակ արեան իջումն, վասն իջուցանելոյն ի Խաչէն արիւնազանգ մարմնովն,

վասն դիազարդեալ դնելոյն ի սուրբ գերեզմանն:

Աղաչեմ զքեզ, մայր լուսոյ, հայցեա՛ զթողութիւն մեղաւորիս: Դի՛ր աղերս առաջի նորա զամենակիրս չարչարանաց իւրոց, զոր վասն իմ կրեաց բարերարն և մարդասէրն: Յիշեցո՛, սուրբ կոյս, զայսքան չարչարանացն, զի թերևս ողորմեսցի և ներեսցէ բազմամեղիս և ջնջեսցէ զձեռագիր իմոց յանցանաց: Եւ իւր անմեղ մասամբն և սուրբ արեամբն դրոշմեսցէ զգրեալս ի դպրութիւն կենացն անվախճանից ընդ ամենայն սուրբս իւր:

Եւ քեզ երկրպագութիւն ի մեղուցեալ ոգւոյս, ամենասուրբ կոյս, բարեխօս լե՛ր ծառայիս Աստուծոյ. ամէն:

ԱՂՕԹՔ

Երանելւոյն Յովհաննու Գառնեցւոյ վասն ճանապարհի

Առաջնորդ կենաց, ճանապարհ ճշմարտութեան Տէր մեր Յիսուս Քրիստոս: Որ առաջնորդեցեր Յովսեփայ յԵգիպտոս, և Իսրայելացւոց ընդ ծովն Կարմիր, և Մովսիսի ի լեառն Սինէական, և ժողովրդեանն յերկիր պարգևացն, և Կղէովպասանցն ճանապարհակից եղեր յէմմաուուս:

Աղաչեմ զքեզ, Տէր, առաջնորդեա՛ ինձ և եղբարց իմոց գնալ խաղաղութեամբ զառաջիկայ ընթացս, փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն, և բարի առաջնորդեա՛ ի դէմ եղեալ ի տեղին, զի դու ես ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք մեր և քեզ փառք և երկրպագութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

ԱՂԵՐՍ

ՎԱՄՆ ՁԱՒԱԿ ԾՆԱՆԵԼՈՅ

Աստուած բոլորից, անճառ մեծութիւն, հզօր զօրութիւն, ամենակարող բարերարութիւն: Առ քեզ հայի ամենայն ակն տեսողի: Նայեաց ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծառայից և աղախնեայց, որպէս Աննայի լուար հեծութեան, և ետուր նմա զմեծն Սամուէլ, և Յովակիմայ և Աննայի զամենաօրհնեալն Մարիամ , և Զաքարիայի և Եղիսաբեթի պարգևեցեր զաւակ զսուրբ Կարապետն և զՄկրտիչն Յովհաննէս: Նոյն ողորմութեամբդ քո պարգևեա՛ և տո՛ւր սոցա զաւակ բարի ծառայիս Աստուծոյ. ամէն:

Զայնն բարբառոյ յանապատի,
Ս. Յովհաննէս դու ամլորդի,
Անմեղ գառինն անապատի,
Վկայ եղեր դու կրկնակի:

Բարեխօսութեամբ սրբոց մարգարէից Մովսիսի և Ահարովնի, Նաթանայ և Սամուէլի, Դաւթի, Ամովսայ, Միքիասայ, Աբդիասայ, Յովնանու, Նաւում ընդ Ամբակումայ, Սոփոնիայ և Անգէի, Մաղաքիա ընդ Դանիէլի, Զաքարիա ընդ Եզեկիէլի, և ամենայն սրբոց դասու. պահապան լիցին ծառայիս Աստուծոյ. ամէն:

ԱՂԵՐՍ
ԱՌ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅՆ

Ի քէն հայցեմք արտասուագին,
Նախավկայ Տեառն արարչին,
Ս. Ստեփանոս բացող երկնին,
Տեսող զՅիսուս յաջմէ ծնողին,
Լե՛ր բարեխօս արեամբ քոյին
Տալ մեզ հանգիստ ի յանկողնին,
Արթուն լինիլ յառաւօտուն,
Բարեբանեալ զլոյսն անքնին:

ԱՂՕԹՔ
ԶՕՐԱՒՈՐ ԱՌ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՍ

Անեղ անմահ Արարչին սպասաւորք անմարմինք՝ վերին զօրացն դասապետութիւնք: Աթոռք, Քերովբէք և Սերովբէք, Տէրութիւնք, Զօրութիւնք և Իշխանութիւնք, Պետութիւնք, Հրեշտակապետք և Հրեշտակք, Միքայէլ և Գաբրիէլ, Պետք վերնական զօրացն դասուց, որք անլռելի ձայնիւ փառաբանութիւն մատուցանէք ամենասուրբ Երրորդութեանն, և երեքսրբեան ձայնիւ եղանակէք զերգս՝ ասելով. «Ողորմեա՛, դո՛ւ ստեղծեր մի՛ կորուսաներ, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ». օգնական և պահապան լերո՛ւք ծառայիս Աստուծոյ. ամէն:

ԱՂՕԹՔ
ԱՌ ՍՈՒՐԲ ԶԻՆԱՒՈՐՍ ՔՐԻՍՏՈՍԻ

Բարեխօսութեամբ սուրբ զօրավարացն, սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին, և սրբոյն Թէոդորոսի զօրավարին, Գէորգայ զօրավարին և Մերկերիոսի զինաւորին. Անդրէի զօրավարին, և չորից զինուորացն՝ Բասոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասիլիդեայ, սրբոյն Մինասայ, Երմոգինեայ և Գրաբոսի, և սրբոց Ատովմեանց, Ոսկեանց, և Սուքիասանց, Խարիթեանց և այլ ամենայն սրբոց բարեխօսութեամբն պահեա՛ զծառայս քո. ամէն:

ԱՂՕԹՔ
ՎԱՍՆ ԱԿԱՆ ՉԱՐԻ
ԵՒ ԼԵՁՈՒԻ ՉԱՐԻ

Տէր Աստուած մարդասէր, մարդասիրի Հօր Որդի, դու ես պահապան և օգնական յուսացելոցս ի քեզ ողորմութեամբ քո ի ծառայս, և պահեա՛ անփորձ ի չարէ և անսայթաք յորոգայթէ երևելի և աներևոյթ թշնամւոյն. պահեա՛ ի չար աչաց և ի չար լեզուէ, ի սրոյ և յամենայն հարուածոց երևելեաց և աներևութից պահեա՛ զծառայս քո. ամէն:

ԱՂՕԹՔ
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Աղաչեմ զքեզ, Քրիստոս փրկիչ աշխարհի, հայեա՛ յիս և ողորմեա՛ և շնորհեա ներումն բազում անօրէնութեան իմոյ, քանզի անարգեցի զամենայն բարիսն, զոր արարեր ինձ ի մանկութենէ իմմէ, զի զտխմարս և զանիմաստս արարեր անօթ գիտութեան:

Յաճախեաց յիսն շնորհքն քո և լցոյց զքաղց իմ և զծարաւ իմ զովացոյց, և լուսաւորեաց զխաւարեալ միտս իմ, և ժողովեաց ի մոլորութենէ զխորհուրդս իմ և ելից ի ծոց իմ, վասն որոյ անկեալ երկիրպագանեմ առաջի քո՝ խոստովան եղեալ զբարերարութենէ քումմէ, և աղաչեմ, դադարեցո՛ առ իս զխոստումն շնորհի քոյ, և պահեա՛ զնա ի գանձի քում, զի դարձեալ տացես ինձ զնա յաւուրն յայն-

միկ: Մի՛ բարկանար ինձ, մարդասէր, զի ոչ հանդուրժեմ սպառնալեաց քոց, յաղագս որոյ և աղաչեմ ժտելով, զի առաւել քան զչափն յաճախեաց յիս շնորհն քո, վասն զի և լեզու իմ տկարացաւ՝ ոչ կարելով խօսել զնմանէ, հիացան և միտք իմ՝ ոչ բերելով զբազմութիւն ալեաց նորա: Կերպարանք և ճառագայթ օրհնելոյ Հօրդ, դադարեցո՛ առ իս հոսանաց նորա, զի իբրև զհուր բորբոքեալ բոցակիզեսցէ զերիկամունս իմ և զսիրտ իմ. և անդր դարձեալ պարգևեա՛ ինձ զնա և կեցո՛ զիս յարքայութեան քում. մի՛ յիշեր զանօրէնութիւնս իմ. յանդգնիմ և հայցեմ, տո՛ւր ինձ զխնդրուածս իմ և արա՛ առ իս օթևան օրհնեալ Հարբ քով յաւուր յայտնութեան քոյ. շնորհեա՛ ինձ, Քրիստոս, զհայցուածս իմ, զի դու միայն ես տուիչ կենաց իմոց, և քեզ ընդ Հօր Հոգւովն Սրբով փառք այժմ և յաւիտեանս. ամէն:

ՄԱՂԹԱՆՔ
ԱՌ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ ՄԵՐ

Լուսաւորիչ հայր պարծանաց,
Ընկա՛լ զբանս զայս մաղթանաց
Եւ աղաչեա՛ զհայրն փառաց՝
Ջնջել զգիր մեր յանցանաց:

Այլ և բարեխօսութեամբ երեք հարիւր ութ և տասն հայրապետացն և ուղղափառ եպիսկոպոսացն աղօթիւք պահեա՛, Տէր Աստուած, զծառայս քո. ամէն:

ԱՂՕԹՔ
ԱՌ ԴՐԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Տաճար Աստուծոյ և բնակարան Սուրբ Հոգւոյն, ի քէն սուրբ աւազանաւն կոչեաց յորդեգրութիւն Հօրն երկնաւորի: Այսօր ի քեզ կամեցաւ պատարագել գառն անարատ: Եւ ես դիմեալ եկի առ դուրս քո և աղաչեմ զքեզ, մաքրեա՛ զիս վերստին լուացմամբ և սրբեա՛ ի մեղաց և արա՛ արժանի մտանել առաջի սրբոյ սեղանոյդ յերկրպագութիւն:

ԲԱՆ ԻԸ.

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն
ընդդիմամարտ դիւաց այս նուագ աղօթից
և դիւասարսուռ ջերմնապագնապ
ախտաւորութեանց Աստուծով փարատիչ

Արդ, այսքանեաց անբաւից հրաշից հանդերձից Հա՛յր ամենաստեղծ. անունդ ահաւոր, ձայն սարսափելի, կոչումն ընտանի, բան համբուրելի, ազդումն սքանչելի, հրաման սոսկալի, էութիւն անքննելի, գոյութիւն անճառելի, իսկութիւն անբաւելի, զօրութիւն անզննելի, կամք ամենաբարի, տէրութիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն անբովանդակելի, որքանութիւն անկշռելի, առաւելութիւն անհասանելի, պատճառ Որդւոյ հայրութեամբ, այլ ոչ նախադրութեամբ:

Քև և ի ձեռն քոյդ անպարտագիր զօրութեանդ սաստեա՛ տագնապող և դիւական տենդիս ջերմութեամբ, որ սպրդեալ մուծաւ ընդ մեղաց, զի փախիցէ ի մարդոյս՝ զարհուրեալ ի սխրալի և անբաւելի արեան վտակի գառինդ երկնաւորի, որով սրսկեալ միանգամ ի մշտնջենաւորս համայն մաքրեցաք: Եւ արդ՝ յայս պատկառելի խոնարհութենէ արարչակերտս խորհրդոյ՝ ամաչեսցէ սատանայ ի գործս չարեաց իւրոցն հրեշտակաց: Տանջեսցի և հալածեսցի, հեռացեալ և արտաքս առաքեալ ի շինուածոյ խորանէ քումդ բնակութեան յարտաքին խաւարն: Եւ ջնջեալ մաքրեա՛ զարտասուս ողբոցս ի դիմաց մերոց և զհառաչումն ձայնիս հեծութեան ի սրտից մերոց: Եւ յիշատակաւ հարման հեղուսիցն, քստմնափուշ, տաժանատեսիլ ոգեպահանջից, որով պնդեցաւ Միածինդ քո յաշտարակ Խաչին, ցաւեսցի՛ չարին: Եւ ի կողահերձ սայրասուք սլաքէ ուժգին

բաղխմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, ի սպառ սատակեսցի սկզբնարանն մահու: Եւ զի խոնարհեցոյց զգովեալն գլուխ յաւանդել զոգին ի ծոց քո, բարձրեա՛լ, ապստամբութիւն անբարի բարուցն բելիարայ ի կոր կործանեսցի ամենայնիւ հերքեալ ի կորուստ: Եւ զի զօղեալ ծածկեցաւ անմահն խկութիւն յորովայնի երկրի, այսու ամենաբարձրեալն հպարտութիւն կարծեալ գոռոզին ի յատակս մահու դժոխոց մթին ստուերին յառեալ դիտեսցէ: Եւ յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահացու դիմամարտութիւն թունից վիշապին՝ կենարարն կրիւք ամենազօրին: Վասն զի ի փառս քո, Հա՛յր ողորմութեան, իբր ի գովեստ Որդւոյ քո Հոգւովդ Սրբով զայս խոստովանիմ: Քան զի ոչ պիտակ ինչ սոսկ զօրութեանն ունի զմիւսէն՝ առ մի խորհրդականն խորութեան: Այլ զանսկիզբն բանդ անձնաւոր ընդ անժամանակդ Հօր փառաւորեմք: Եւ քեզ

միայնոյ Սուրբ Երրորդութեանդ, հաւասարապատիւ տէրութեանդ, համբուն անբաժին ինքնութեանդ՝ օրհնաբանութիւն, գոհութիւն, զօրութիւն, և անճառ վայելչութիւն մեծութեան, բարեվիճակ հարթութեան, զուգակշիռ հաւասարութեան յաւիտեանս. ամէն:

ՄԱՂԹԱՆՔ
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ
ԶՕՐԱՒՈՐ ԸՆԴԴԷՄ ԱՄԵՆԱՅՆ ՉԱՐԵԱՑ

ԲԱՆ ԺԲ.

Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս: Մատի՛ր դթութեամբ առ պատկառեալս դիմօք: Փարատեա՛, ամենապարգև, զամօթական տխրութիւնս: Բա՛րձ յինէն, ողորմած, զանբերելի ծանրութիւնս: Անջրպետեա՛, հնարաւոր, զմահացու կրթութիւնս: Աւարեա՛, միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս: Բացադրեա՛, վերնային, զմոլելոյն մառախուղ: Կնքեա՛, կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս: Ցրուեա՛, ծածկատես, զըմբռնողին չար գտմունս: Խորտակեա՛, անքնին, զմարտողին դիմեցմունս: Տեառնագրեա՛

քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս: Պարփակեա՛ քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս: Գծագրեա՛ քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս: Կերպացո՛ զքո նշանդ ի հետ ելից մաղթողիս: Ամրացո՛ քո աջովդ զհանգստեանս խշտիս: Մաքրեսցես ի յաղբից զծածկարան անկողնոյս: Պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս: Անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս: Կացուսցես շրջափակ մարմնոյս: Կացուսցես շրջափակ զպար զօրոյդ երկնայնոյ:

Կարգեսցես ի դիմի ընդդէմ դիւացն դասու: Տո՛ւր հանգիստ բերկրութեան, մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս: Բարեխօսութեամբ հայցուածոց սրբուհւոյ Աստուածածնիդ և ամենայն ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութեանց, զգայարանցս իմաստից, անզարհուրելի զետեղմամբ, ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից: Յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեայ, և սթափեալ վերստին ի ննջմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ ի քեզ արձանացեալ՝ զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց, քեզ ամէնօրհնեալ թագաւորդ փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել: Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹՔ
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

ԲԱՆ ԽԱ.

Որդի Աստուծոյ կենդանւոյ, օրհնեալդ յամենայնի Հօրդ ահաւորի անքնին ծնունդ, որ տկարանայ առ ի քէն և ոչ ինչ. որ ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո փառաց՝ հալին մեղք, հալածին դևք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի: Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել: Թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ, զի դու միայն ես յերկնի անճառ և յերկրի անգնին, ի տարր գոյի և յեզրս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայն լրմամբ օրհնեալդ ի բարձունս: Եւ քեզ ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

ԱՂՕԹՔ
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

ԲԱՆ ՂԴ.

Աստուած յաւիտենական, բարերար և ամենակալ, ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ, կեանք ի մահու և լոյս ի խաւարի, յոյս ակն ունողաց և երկայնմտութիւն տարակուսելոց, որ ամէնարուեստ իմաստութեամբ քով դարձուցանես յայդ զստուերս մահու, աննուազ ծագումն և անմուտ արեգակն, քան զի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քոյ խաւար գիշերոյ: Որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց, երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. որ լսել զհեծութիւն կապելոց և հայիս յաղօթս խոնարհաց և ընդունիս զխնդրուածս նոցա, Աստուած

իմ և թագաւոր իմ, կեանք իմ ապաւէն իմ, յոյս իմ և վստահութիւն իմ, Յիսուս Քրիստոս Աստուածդ ամենայնի, սուրբդ հանգուցեալ ի հոգիս սրբոց, մխիթարութիւն վշտաց և քաւարան մեղուցելոց, որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա, առաքեա՛ զպահպանողական զօրութիւն աջոյ քոյ և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և ի դիւէ չարէ: Որպէս զի զյիշատակ սոսկալի և սուրբ քոյ անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ, որք կարդան զքեզ ի բոլոր սրտէ: Եւ ի դրոշմէ Խաչի քոյոյ նշանիդ, զոր աստուածային արեամբ քով ներկեալ նորոգեցեր, և ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և ի փառս պատկերի քոյ նկարեալ յօրինեցեր, այսու պարգևօք աստուածականօք ամաչեսցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձին որոգայթքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին

զէնքն սայրասուրք, մերժեսցին մէգն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն: Բազուկ քո հովանասցի, և աջ քո կնքեսցէ, վասն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է ի վերայ ծառայից քոց: Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂԵՐՍ
ԱՌ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼՍՆ

Անմահ գառին հզօրի,
Որ միշտ զենեալ և կենդանի,
Երկոտասան գառանցդ խմբի,
Ձեզ այս աղերս մատուցանի:

Սուրբ Պետրոսի և Անդրէի,
Երկու եղբարց նախակոչի,
Յակոբոսի, Յովհաննիսի,
Զկնորս որդիքն Զեբեթի:

Փիլիպպոսի, Բարթուղիմէի,
Թովմայի և Մատթէոսի,
Յակոբ Ալփեայ Թադէոսի,
Շմաւոնի, Մատաթէի:

Երկոտասան առաքելոց,
Ի Քրիստոսէ պսակելոց:
Այս են բաղձանք սրտից մերոց.
Փրկել զմեզ յայսոց պղծոց:
Եւ լիցի պահապան ծառայիս
Աստուծոյ. ամէն:

Պարծանք հաւատացելոց ի Քրիստոս և
գովեստ սրբոյ Խաչին,
որ երևեցաւ յԵրուսաղէմ յաւուրս
Կիւրղի հայրապետին. Մայիսի Է.

Խաչն քրիստոնէից յոյս, Խաչն կուրաց առաջնորդ, Խաչն մոլորելոց դարձուցիչ, Խաչն աղքատաց մխիթարութիւն, Խաչն մեծատանց սանձ, Խաչն ամբարտաւանից քակտումն, Խաչն ախոյեան դիւաց, Խաչն բանսարկուին յաղթութիւն, Խաչն դաստիարակ, Խաչն աղքատաց մեծութիւն, Խաչն անյուսից յոյս, Խաչն նաւավարաց նաւապետ, Խաչն տագնապելոց

հանգիստ, Խաչն պատերազմողաց պարիսպ, Խաչն հայր սրբոց, Խաչն վերակացու այրեաց, Խաչն անիրաւաց դատաւոր, Խաչն արդարոց խորհրդակից, Խաչն նեղելոց հանգիստ, Խաչն տղայոց պահապան, Խաչն արանց գլուխ, Խաչն ծերոց կատարումն, Խաչն խաւարելոց լոյս, Խաչն թագաւորաց վայելչութիւն, Խաչն զէն յաւիտենական, Խաչն բարբարոսաց ազատութիւն, Խաչն անխրատից իմաստութիւն, Խաչն անօրինելոց օրէնք, Խաչն մարգարէից քարոզ, Խաչն առաքելոց պատմութիւն, Խաչն մարտիրոսաց պարծանք, Խաչն վանականաց պահապան, Խաչն կուսանաց զգաստութիւն, Խաչն քահանայից ուրախութիւն, Խաչն եկեղեցւոյ հիմն, Խաչն տիեզերաց զգուշութիւն, Խաչն մեհենից աւերիչ, Խաչն բագնեաց կործանիչ, Խաչն ճենճերաց ապականիչ, Խաչն հրէից գայթակղութիւն, Խաչն ամբարշտաց կորուստ, Խաչն տկարաց զօրութիւն, Խաչն հիւանդաց բժշկութիւն, Խաչն բորոտաց սրբիչ, Խաչն անդամալուծից ուղղիչ, Խաչն պագշոտաց բժշկութիւն, Խաչն քաղցելոց հաց, Խաչն ծարաւելոց աղբիւր, Խաչն մերկաց վերարկու, Խաչն անբարբառ բարեխօս ծառայիս Աստուծոյ. ամէն:

ԱՆՈՒԱՆՔ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԱՑՆ, ՈՐՔ ԵՆ ԲԱՐԵԽՕՍ ՎԱՄՆ ՄԵՐ

Բարեխօսութեամբ Աստուածային սուրբ նշանին և անբարբառ բարեխօսին Քրիստոսի վասն ազգի մարդկան՝ որբոց կենաց Խաչափայտին Քրիստոսի, Աւազակին սուրբ նշանին, Վարագայ սուրբ նշանին, Երևման սուրբ նշանին, Հաղբատայ սուրբ նշանին, Վանկոյ սուրբ նշանին, Կողբայ սուրբ նշանին, Ադինեայ սուրբ նշանին, Սերեխոյ սուրբ նշանին, Մառառայ սուրբ նշանին, Գանձասարայ սուրբ նշանին: Եւ Քրիստոսի սուրբ գեղարդին, Գետարգել սուրբ նշանին, Ապարանից սուրբ նշանին, Կարմրակ սուրբ նշանին, Սքանչելագործ սուրբ նշանին, Ծիծռան սուրբ նշանին, Աղթամարայ սուրբ նշանին, Սանահնու սուրբ նշանին, Կիպրոսի սուրբ նշանին, Վարոսի սուրբ նշանին, Կոստանդիանոսի սուրբ նշանին և Տապանակի սուրբ նշանին, Վրաց Հոռոմոց սուրբ նշանին, Կոստանդնուպոլսոյ սուրբ նշանին, Հապէշու և Խպտոյ սուրբ նշանին, Հացունեաց սուրբ նշանին, որ ի գալստեանն յառաջագոյն: Գայլակլայ սուրբ նշանին, Հնդու սուրբ նշանին, Կապնկայ սուրբ նշանին, Պիզեռու սուրբ նշանին, Հռիփսիմէի սուրբ նշանին, Բոգու սուրբ նշանին, Սարի սուրբ նշանին: Եւ այլ ամենայն սուրբ նշանացն, որք յընդհանուր տիեզերս իցեն՝ սոցին սուրբ և արժանաւոր աղօթիւքն և անբարբառ բարեխօսութեամբն ողորմեա՛ ծառայիս քոյ:

ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԶՈՐ ԱՐԱՐ

Եւ Քրիստոս բժշկեաց ի ժողովրդենէ բազում հիւանդս, լուսաւորեաց զկոյրս, հալածեաց ի մարդկանէ զդեւս, սրբեաց զբորոտս, գնացոյց զանդամալոյծն, որ ի Բեթհեզդայ անկեալ դնէր երեսուն և ութ ամ, և յարոյց ի մեռելոց զչորեքօրեայ մեռեալն և այլ անթիւ սքանչելիս և հրաշագործութիւնս արար: Նոյն ողորմութեամբն իւրով հեռի արասցէ ի մէնջ զգլխացաւն, զաչաց ցաւն, զականջացաւն, զատամանց ցաւն, զսրտացաւն, զմիջաց ցաւն, զկշտացաւն, զխիթն որովայնի, զծնկացաւն, և յամենայն ցեղ ցաւոց ազատեսցէ և օգնական և պահապան լիցի ծառայիս Աստուծոյ. ամէն:

Վերսփին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի

Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՆ ՁԴ.

Ա. Արքայ երկնաւոր, թագաւոր բարձրեալ, Տէր բոլորից, ամենից ակնկալութիւն, ստեղծող տեսականաց, հաստիչ իմանալեաց, պատճառ եղանութեանց, կազմիչ հանդերձելոց, տուիչ լուսոյ, առիթ առաւօտու, պատրաստիչ վաղորդայնի, երևեցուցիչ յերեկոյի, տարրիչ խաւարի, արուեստաւոր բարեհնար, իմաստութեան գործոնեայ, քաւարան օրհնեալ, հալիչ մեղանաց, հալածիչ ցաւոց, քակտիչ դառնութեանց, պահպանարան հանգստեան, հնարք նիրհման, յարմարիչ քնոյ, պարգևիչ ննջման,

ընչոյ յարակարգութիւն, զգայնութեան տևողութիւն, ցրիչ ցնորից, յեղանակիչ անրջոց, փոխարկութիւն զարհուրմանց, այլակերպութիւն տխրութեանց, խափանիչ խիթմանց, ընդարձակիչ կարծեաց, համադրութիւն ծփմանց, ահագնութիւն խարդախմանց, հարուածիչ դիւաց, փախուցիչ ախտից, ընկղմիչ գայթակղութեանց:

Բ. Պաշտպանեա՛ երկնաստեղծ ձեռամբդ, զօրացո՛ բարձրացեալ քո աջովդ, ամփոփեա՛ ամենակալ թևօք, ծածկեա՛ աստուածային խնամօքդ, ամրացո՛ վերակացութեամբ վերնայնոցդ, շուրջանակի պարսպեա՛ գումարտակօքդ անմահից, ի յամենուստ պարփակեա՛ կցորդութեամբ հրեշտակացդ, վանեա՛ զընդդիմամարտն իմ զինուորութեամբ զուարթնոցդ, պատսպարեա՛ զսասանեալս՝ Աստուածածնիդ մաղթանօք, զբանակս անդրանկացդ բարեկարգեա՛ ինձ պահապան: Բա՛ց ընդ աչացս և զմտացս իմ

տեսանելիս, զգաստ արա՛ ընդ ոգւոցս և զծանրաբեռն կրիցս դանդաղութիւն, վերացո՛, Տէր, ի զգայնութեանցս զմածեալս յիմարութիւն, բա՛րձ, միայն բարեգործ, զպատրուակիս թանձրութիւն: Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողորմութիւն քո ծագեա՛, ընդ ելից արևուն՝ արդարութեան արեգակդ ի յանձկութիւն սրտիս մտցէ, ճառագայթ քո փառացդ՝ ի յիմաստիցս խորհրդանոջ ջահեսցի: Խաչիդ տեառնագրութիւն ընդ շունչս և ընդ մարմինս համասփիւռ տարածեսցի: Յանձն առնեմ քեզ յաւուրս զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս որ ի սմին: Զի դու ես Աստուած անքնին, առ ամենեսին բաւական և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՆ ՁԹ.

Աստուած և Տէր, կեանք և արարիչ, ողորմած, գթած, լոյս, երկայնամիտ, անոխակալ, մարդասէր, ամենագութ, պարգևատու, փրկիչ, օրհնեալ, գովեալ, բարեբանեալ: Դարան ամրութեան, պատսպարան վստահութեան, առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վիրաց, անհասանելեաց հնարք, անմատչելեաց հպաւոր, անյուսութեան ելք, անուն քո խոստովանեալ Աստուծոյ Որդի. և Հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և Հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելւոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս. ամէն:

Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՆ Ղ.

Ա. Բարեբանեալ Աստուած երկնաւոր, միայն արարիչ, Տէր ամենակալ, մեծութիւն ահեղ, գթութիւն օրհնաբանելի, ողորմութիւն խոստովանելի, բարերարութիւն երկրպագելի, խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն տօնելի, պահպանութիւն խնկելի, բարձրեալ անքնին, մերձաւոր կամարար, ապաւէն անկասկածելի մխիթար սրտից, փարատիչ վշտաց, ապաքինիչ ցաւոց, սպառումն վհատութեանց, բարձումն պարտեաց, փոխարկիչ կարեաց, կարգաւորիչ կրից, յարմարիչ բանից, սանձարկու լեզուի, շրջադրութիւն շնչոյ, կացուցիչ հագագի, ամփոփիչ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցիչ յուզմանց,

հանդարտութիւն մրրկաց, խաղաղութիւն ծփանաց, որ ունիս զթևոց ամենընթաց իշխանականիս և իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես:

Բ. Գոհաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութեամբ անհպարտութեամբ երկայնամտեալ հանդչիս տենչանօք անճառ հրաշիւք յանձինս սրբոց: Թագաւոր էից համայնից, ամենայնիւ ծանուցեալ զթած, սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից, ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս ի լոյսդ վերին: Զեռնկալու մեծ վստահութեան, որ ոչ թողացուցանես գայթակղելոյս ի վայր կործանիլ. յուսոյ կերպարան, ճշմարիտ առհաւատչէի աղաչողաց մատանց յայտնի երևեալ. ապաւինութիւն հանգստեան, որ ոչ երբէք մատնես վտանգի դատապարտութեան: Ազատութիւն շնորհաձիր, որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց. առատութիւն աննախանձելի, որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես: Պայծառութիւն անստուեր, որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես: Քաւիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս ի փրկութենէ առաջնովն պայծառութեամբ նորոգեալ՝ վերստին վայելչացուցանես: Հնարաւոր դիւրահաս առ ամենայն ամբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ. ելք վստահութեան առ խոստացելոցն վայելս. երանութիւն անձկալի, յոր զկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից կենդանի: Կամք անփոխադրելի առ ի քաւութիւն գերւոյս զօրացեալ ամենագովելի. անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց բնաւին եղծելոց առնես զսքանչելիս: Ամենաստեղծ աներկբայելի, որ զհուրբ կիզեալն և զհողմով հոսեալն և զժանեօք գազանաց ծախեալն, ի քթթել ական նո-

վին հիւթականութեամբ անպակաս յարուցանես: Անհաւասար համարձակութիւն, յորում Աստուածորէն պարծանօք պարծելն է իրաւացի:

Գ. Հայեա՛ց, Տէր, յերկնից զուարթ քաղցրութեամբ յամենակործան վտանգ նեղելոյս, և արա՛ անդորր հանգստական դիւրաւոր ի բազմատագնապս հեծութենէ: Եւ զյարուցեալ գումարս սատակչացն, եթէ սպառազէնք այսական դժնեայ հնարաւորութեան բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեղաց տգեղ և քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վատնիչ և կորստական նշմարանք, մերժեսցե՛ս, հանցե՛ս, հատցե՛ս, խափանեսցե՛ս և հալածեսցես՝ հեռի սահմանաւ խպառ տարագրեալ անդարձ որոշմամբ վերստին կորստեան. և կառուսցե՛ս, կացուսցես նպատակ կենաց և ամուր մահարձան՝ զնշան խաչիդ ապաւինելոյս ի քեզ փրկութիւն: Եւ յայսմ անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութեան, լուծցին որոգայթքն գաղտնածածուկ սատանայականք, կապտեսցին մեքենայքն, վատնեսցին գայթակղութիւնքն, խայտառակեսցին հաղբիցն դրութիւնք, յայտնեսցին երևոյթք որսոյն, գտցին նենգողին ծուղակք, վերասցին վարմին վերարկուք, տոչորեսցին որոմանցն բոյսք, նզովեսցին բռնաւորին չարաբանութիւնք, կտրեսցի լար խաբէութեան ի մահ որսողին, պարսեսցին պատրողին բանսարկութիւնք, պակասեսցին զէնք զրպարտողին, անկցին սուսերք մահաբերին, սուզեսցին սադրողին պատրաստութիւնք, արձակեսցին տոռունք տագնապողին: Այլայլեսցին սուտ կերպարանք կեղծաւորին, սատակեսցին խրոխտականացն խիստ յարձակմունք, ցրուեսցին կցորդութիւնք կերչացն, բաժանեսցին ազինք աւազակացն, քայքայեսցին բոյլք բարբարոսացն, քանդես-

ցին ամրոցք ապստամբողացն, արգելցին ամպրոպք յանդգնելոցն, փարատեսցին փորձողին անձրևք, հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին: Խորտակեսցի եղջիւր գոռոզին, մանրեսցին ամբառնալիք դրօշիցն կերպարանաց, փշրեսցին ամբարհաւաճութիւնք հպարտացելոց, նահանջեսցին դիմեցմունք ճակատելոցն, քակտեսցին միաբանութիւնք զօրացն Բելիարայ՝ թէ անմարմինք և թէ մարմնաւորք, փախիցեն ընդ նոյն ճանապարհ ի մի շաւղաց հետոց՝ յեօթն տարակոյս, ի գուբն ինձ փորեալ՝ ինքեանք ընկճեսցին: Յեղանակեսցին ձմերունք ձանձրացուցչին, հատցի կապն կցորդութեան մշտաջան աւազակին, նողկասցի մտացս կացից՝ համբոյր շողոքորթին, ընդմիջեալ մեկնեսցին նետաձգութիւնք նեղչին, կացցէ ի սասանման նաւ խարդախողին, խլեսցին յարմատոց անտի ատամունք խածանողին:

Դ. Վասն փայտիդ օրնութեան կենաց, յորում պրկեցար Աստուածդ անըմբռնելի, յիշատակաւ բևեռացդ, որով ի գործի մահուն մածուցար, արարիչդ երկնի և երկրի, արեամբդ տէրունականաւ, որով զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար, լեղւոյն դառնութեամբ, զոր արբեալ զդեղատուութիւն կորուսչին արտաքս հեղեր, պատմաբանութեամբ ըղձական ճառիւք կրիցն սարսափելեաց, որով զլրբութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր. անուամբդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ, յորմէ դողան և դատապարտին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ բնութիւնք ամենայն երևութից և անեւրևութից. եղիցին այս ամենայն պարգևք շնորհաց խոստովանելոյս ի պաշտպանութիւն, ի բժշկութիւն և ի քաւութիւն: Եւ մահաբեր դառնաթոյն օձին և որ ի նմա ազդեաց տիեզերադաւ չարութիւնն, ի սատակումն եղիցի նորին. նոյն

ինքն ի կորուստ և ի յանբժշկական հարուած տանջանացն՝ սովաւ մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի: Եղիցի ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս, և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ ի մի:

Ե. Եւ որ ոք ընթերցի զայս աղերս ձայնի մաղթանաց գոչման աղօթից հայցման ծերոյ և տղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղախնեայց ոք պաղատեսցի աստուածսիրաբար, հաւասարապէս անաչառութեամբ ընկալցին ի քէն մասն երանութեան պարտուց ազատութեան, հաստեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, նկարեալ դարձեալ զքոյդ կերպարան անփոփոխելի: Ահա տիրապէս հնարաւոր, զօրեղ, անիմանալի, տեսցես աստանօր ի հառաչանս կողկողանաց այսր հեծութեան, որ ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն Հօր քոյ երկնաւորի և բարերարի,

և Հոգւոյն Սրբոյ փառակցի և կենդանատուի, Աստուածածնիդ բարեխօսութեամբ և խնդրուածովք ամենայն սրբոց: Զի դու ստեղծեր զամենայն, և ի քէն եղեն ամենայնք, և դու տիրես ամենայնի, և քեզ փառք յամենեցունց. միդ իսկութենէ անժամանակ Երրորդութեանդ, զուգակցապէս փառաւորեալ յանբաւս և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ ԽՕՍՔ
ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ
ԲԱՆ ՂԵ.

Ա. Արեգակն արդար, ճառագայթ օրհնեալ, լուսոյ կերպարան, փափաք անձկութեան, բարձրեալ անքնին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրութիւն, յուսոյ տեսութիւն, գովեալ երկնաւոր, թագաւոր փառաց Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք: Եւ արդ, զթերութիւն վրիպանաց բազմասխալ ձայնի եղկելւոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ մատուսցես յաղերս հաճութեան Հօր քում բարձրելոյ: Որ վասն իմ ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութիւն՝ ամենևին կենաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարեխնամող տեսուչ համայնից: Զի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ՝ Աստուած և Տէրդ բոլորեցուն, որչա՛փ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ առելոյ ի մէնջ՝ առ համապատիւդ քո Հայր:

Բ. Եւ վասն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ ի հաճութիւն կամաց առաքչիդ՝ բարձին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս, թողցին պարտիքն, ապաքինեսցի ամօթն, մոռասցին պատկառանքն, բարեգործեսցին դատակնիքն, սատակեսցին որդունքն, վերասցի լալն, հանդարտեսցէ կրճումն ատամանցն, սպառեսցին ողբքն, հատցին արտասուքն, մերժեսցի սուգն, հալածեսցի խաւարն, վատնեսցի հուրն սաստկութեան, հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք:

Գ. Եկեսցեն գթութիւնք կամողիդ և պարգևողիդ կենաց ամենից, ծագեսցի

լոյսդ, արագեսցէ փրկութիւնդ, հասցէ օգնութիւնդ, ժամանեսցէ այցելութիւնդ, կանխեսցէ ցօղ ողորմութեան, յառաջեսցէ արբուսցէ զանդաստանս պասքեալ՝ անկեալ ոսկերացս թշուառութեամբ ի վիհն մահու, ծաղկեցուսցէ պտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր արեան կենանարարիդ՝ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ, որ անծախապէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց: Զի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո, գթա՛ծ, ի քեզ զօրացեալ քև նորոգեցայց, զատեալ ի մեղաց անմահ կենդանութեամբ ի յարութեանն արդարոց, Հօր քում օրհնեցեալ: Ընդ որում քեզ փառք, և Հոգւոյդ Սրբոյ բարեբանութիւն՝ վայելչական գոհութեամբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ԱՌ ՅԵՐԿԻՆՍ

Գոհանամք զքէն, ո՛վ ամենասուրբ Երրորդութիւն՝ Հայր և Որդի և Հոգիդ Սուրբ, որ ասացեր՝ արասցուք մարդ ըստ պատկերի մերում, և առեր հող յերկրէ և փչմամբ օրհնեալ շնչոյ քոյ գոյացուցեր զմարդն Ադամ, վասն որոյ օրհնեմք զմեծութիւն քո: Գոհանամք զքէն, որ զմարդն Ադամ զարդարեցեր եօթնարփեան շնորհօք և երկոտասան փառօք, վասն որոյ օրհնեմք զշնորհս քո: Գոհանամ զքէն, Տէր, որ ի դրախտն զԱդամ անճառելի անպատմելի և հիահրաշ խնդութեամբ, վասն որոյ օրհնեմք զարարչութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ յետ պատրելոյն Ադամայ՝ յԱրգեղայոս անուն օձէն, և արտաքսելոյն ի դրախտէն, որով ի դժոխս գրաւեցաւ, ազատեցեր, վասն որոյ օրհնեմք զփրկու-

թիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ առաքեցեր զանդրանիկն քո զՄիածին Բանն, որ վասն մերոյ փրկութեան խաչեցաւ, թաղեցաւ, յարեաւ, համբարձաւ, վասն որոյ օրհնեմք զմեծ մարդասիրութիւն քո: Գոհանամք զքէն, Տէր, որ զսուրբ մարմին և արիւն նորա պարգևեցեր մեզ կերակուր հոգւոց և կենդանացուցիչ, վասն որոյ օրհնեմք զպարգևս քո:

Գոհանամ զքէն, Տէր, որ զմկրտութիւն ուսուցեր ի Յորդանանէ և կոչեցեր ի խաւարէ ի լոյս: Եւ ետուր զորդեգրութիւնն վերին, վասն որոյ օրհնեմք զշնորհաբաշխութիւն քո: Գոհանամ զքէն, որ եօթն խորհուրդ եկեղեցւոյ կազմեցաւ ի քոյինդ շնորհէ, և խոստովանութեամբ թողութիւն շնորհեցեր, վասն որոյ օրհնեմք զառատապարգև գթութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ անձրև և ցօղ տաս, և բուսանիցս հաց և հանդերձ և ամենայն մսեղեաց կերակուր, վասն որոյ օրհնեմք զբազմարուեստ տեսչութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ միշտ քաղցրութեամբ հայիս յարարածս քո և օր ըստ օրէ շնորհես զբազմամեղ ողորմութիւն քո, վասն որոյ օրհնեմք զանչափ գթութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ մեղաւորաց և զղջացելոց թողութիւն շնորհես, ներես և ոչ եղծանես, վասն որոյ օրհնեմք զանյիշաչարութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, զեղանակս տարւոյն՝ զամառն և զձմեռն, զաշունն և զգարունն արարեր ըստ բնութեան մերում, վասն որոյ օրհնեմք զարարչագործութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ յայսմ ամի ևս ապրեցուցեր զմեզ անվրդով, անմահ և անկասկած, վասն որոյ օրհնեմք զտէրութիւն քո: Գոհանամ զքէն, որ զմեզ ի մահտարաժամէ և յամենայն պատահարաց պահեցեր, վասն որոյ օրհնեմք զպահպանութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ ի հրկիզութենէ, ի հեղեղէ, ի շարժմանէ, ի կայծականց, ի խորշակէ և ի սատակմանէ ապրեցուցեր, վասն որոյ օրհնեմք

զապաւինութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ օրհնեցեր ի լերինն Ձիթենեաց զկաթողիկոսունս, պատրիարքունս և զեպիսկոպոսունս, որ ճրագ և լոյս եղեն աշխարհի, վասն որոյ օրհնեմք զշնորհաբաշխութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ ընձեռեցեր ադամեանս ընութեան քահանայութիւն, որ հրեշտակաց էր կարգ, յաղագս թողութեան յանցանաց մերոց, վասն որոյ օրհնեմք զփրկութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ զսարկաւագունս, զպաշտօնեայս և զՋահընկալս սահմանեցեր, վասն որոյ օրհնեմք զլուսաւորութիւն քո: Գոհանամք զքէն, Տէր, որ զբանաւոր հօտ՝ զժողովուրդս ընկալեալ ունիս ի ծոց քո, և որպէս զտապանն Նոյեան ազատես ի հեղձմանէ մեղաց, վասն որոյ օրհնեմք զզարմանահրաշ գթութիւն քո: Գոհանամ զքէն, Տէր, որ մեղուցեալ ժողովուրդն ոչ պատժես ի տան քում քաւարանի, այլ զդարձումն նկատես, վասն որոյ օրհնեմք զերկայնամտութիւն քո: Եւ վասն մեծի և բարձու ողորմութեան քո, խոնարհեցո՛, Տէր, զունկն քո ի ժամուս յայսմիկ և տո՛ւր մեզ յերկնից ի սրբութենէդ՝ շնորհ, ձիր, ողորմութիւն, քաղցրութիւն, կարողութիւն, մեղաց թողութիւն, առատութիւն, մեծութիւն, աշխարհիս խաղաղութիւն, խնդութիւն, լուսաւորութիւն, Հաւատ, Յոյս, Սէր, մաքրութիւն, առաքինութիւն, բարեաց լիութիւն, հանդարտութիւն, անդորրութիւն, օգնութիւն, հաշտութիւն և օրհնեալ արքայութիւն: Եւ քեզ ընդ Որդւոյ և ընդ Սուրբ Հոգւոյդ վայել է փառք և պատիւ յաւիտեանս. ամէն:

ՅԱՆԿ

Երկու խոսք 5

Հաւատով խոստովանիմ..... 7
Աղօթք պահպանութեան 18
Աղօթք վասն կապանաց դիւաց 35
Աւետարան ըստ Մատթէոսի
Եւ մինչդեռ անցանէր 37
Աւետարան ըստ Մարկոսի
Եւ ել լուր նորա 38
Աւետարան ըստ Ղուկասու
Եւ եղև ընդ աւուրսն 39
Աւետարան ըստ Յովհաննու
Յետ այսորիկ տօն էր 40
Դարձ Կիպրիանոսի 43
Աղօթք Յովհաննու Գառնեցւոյ
Առ Սուրբ Աստուածածինն 55
Աղօթք Յովհաննու Գառնեցւոյ
Վասն ճանապարհի..... 58
Աղերս վասն զաւակ ծնանելոյ 59
Աղերս առ սուրբ Ստեփանոս 61
Աղօթք զօրաւոր առ երկնային զօրս..... 62
Աղօթք առ սուրբ զինաւորս Քրիստոսի 63
Աղօթք վասն ական և լեզուի..... 64

Աղօթք Գրիգոր Լուսաւորչի..... 65
Մաղթանք առ սուրբ Լուսաւորիչն մեր 67
Աղօթք առ դրան Ս. Եկեղեցւոյ 68
Բան Գրիգորի Նարեկացւոյ
Ընդդիմամարտ դիւաց 69
Մաղթանք Գրիգորի Նարեկացւոյ
Ընդդէմ ամենայն չարեաց..... 73
Աղօթք Գրիգորի Նարեկացւոյ
Որդի Աստուծոյ կենդանւոյ 76
Աղօթք Գրիգորի Նարեկացւոյ
Աստուած յաւիտենական 78
Աղերս առ սուրբ առաքեալսն 81
Գովեստ սուրբ Խաչին..... 83
Անուանք սուրբ նշանացն 86
Հրաշագործութիւն Քրիստոսի 88
Բան Գրիգորի Նարեկացւոյ
Արքայ երկնաւոր 89
Բան Գրիգորի Նարեկացւոյ
Աստուած և Տէր 92
Բան Գրիգորի Նարեկացւոյ
Բարեբանեալ Աստուած երկնաւոր..... 93
Բան Գրիգորի Նարեկացւոյ
Արեգակն արդար 102
Գոհաբանութիւն առ յերկինս 105

ԱՂՈԹԱԳՐՔԵՐ - Գ

ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՈՐ ԿՈՉԻ

ԿԻՊՐԻԱՆՈՍ

ՎԱՄՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՋԳ ՊԱՏԱՀԱՐԱՅ ՈՐՔ ԳԱՆ Ի ՎԵՐԱՅ ՄԱՐԴՈՅ

Հրատարակչության
տնօրեն՝ Տ. Եզնիկ արք. Պետրոսյան
Սրբագրիչ՝ Ս. Գրիգորյան
Էջադրումը՝ Ղևոնդ քահանա Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

Չափը՝ 70x100 1/32, թուղթը՝ 80 գ., տեքստը՝ 2 գույն,
կազմը՝ կոշտ, 4 գույն, ծավալը՝ 112 էջ,
տպաքանակը՝ 1000:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ